«Ժողովրդավարության ազգային հիմնադրամ»
info@ned.org
https://www.ned.org
Ֆեյսբուք՝ @*National.Endowment.for.Democracy*
Թվիթեր՝ @*nedemocracy*

«Հելսինկյան ասոցիացիա»
hahr.yerevan@gmail.com
http://www.hahr.am
Ֆեյսբուք՝ @*hahrNGO*
Թվիթեր՝ @*helsinkiyerevan*

«ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԵՆ»

ԱՄՓՈՓ ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2018

Բովանդակություն

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ 3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
Համառոտ ակնարկ 4
Ընդհանուր տեղեկություններ Հանրային պաշտպանի գրասենյակի մասին 5
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 7
Արձանագրված խնդիրները 7
Հիմնախնդիրները 10
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 11
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԸ 12
Ամերիկայի Միացյալ Նահանգներ 13
Շվեդիա 15
Գերմանիա 16
Ավստրիա 18
Բելգիա 19
Իտալիա 20
Ֆրանսիա 22
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հաշվետու զեկույցը ներկայացնում է «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից «Ժողովրդավարության ազգային հիմնադրամի» աջակցությամբ իրականացվող «*Մարդու իրավունքների դիտորդում և շահերի պաշտպանություն*» ծրագրի շրջանակներում անցկացված հետազոտության արդյունքները, Հայաստանում **հանրային պաշտպանի համակարգում** տիրող իրավիճակը, ոլորտի խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև դրանց ուսումնասիրության արդյունքում հանգած եզրակացությունները և համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկները:

Ծրագրի նպատակն էր նպաստել **մարդու իրավունքների, օրենքի և իրավունքի գերակայության** խրախուսմանն ու պաշտպանությանը, ժողովրդավարական գաղափարների և արժեքների ամրապնդմանը Հայաստանի Հանրապետությունում, դրանով իսկ նպաստելով ՀՀ կառավարության և իրավական համակարգի կառույցների, մասնավորապես, ՀՀ Փաստաբանների պալատի (Հանրային պաշտպանի գրասենյակ) և բոլոր ատյանների դատարանների հաշվետվողականությանն ու թափանցիկությանը, աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում ամրագրված չափանիշներին համապատասխան:

Ակնկալվում էր հիմնավորել Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքների վերակառուցման և զարգացման գործում ՀՀ կառավարության կողմից իրավական, ֆինանսական և այլ հնարավոր աջակցության ընդլայնման անհրաժեշտությունը:

Մշակվել են ոլորտի բարեփոխմանն ուղղված առաջարկություններ, որոնք ներկայացվում են ստորև՝ «Առաջարկություններ» բաժնում:

Աշխատանքներն իրականացվել են ծրագրային թիմի կողմից, աշխատանքներին աջակցել են կամավորներ Անի Խոդավերդյանը ԱՄՆ-ից, Սաթենիկ Շիրինյանը Գերմանիայից և Արփինե Մաթևոսյանը Հայաստանից: Հաշվի են առնվել գործընկեր փաստաբանների և լրագրողների առաջարկությունները, օգտագործվել նրանցից ստացված տեղեկատվությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զեկույցն ամփոփում է Հայաստանի Հանրապետությունում հանրային պաշտպանի համակարգի վիճակի մասին մի շարք հիմնավոր փաստարկներ: Հետազոտության նպատակը ոչ միայն որոշ վերլուծություններ կատարելն էր, այլև դրա միջոցով Հանրային պաշտպանի գրասենյակի՝ որպես ՀՀ Փաստաբանների պալատում[1] իր նպատակային տեղն զբաղեցնող կառույցի և առանձնացված ու ինքնօրինակ միավորի վարչական, կազմակերպչական և ֆինանսական բարեփոխումների աջակցության պաշտպանությունը:

Այսպիսով, ներկայացվող զեկույցի **առանցքային նպատակը** ՀՀ-ում հանրային պաշտպանության համակարգի նպատակային և արդյունավետ բարեփոխումներն են:

Համառոտ ակնարկ

Անկախության տարիներին Հայաստանում մարդու իրավունքների վիճակը համամատաբար բարելավվել է ի համեմատություն դրա վիճակին նախկին խորհրդային հանրապետություններից շատերում: Առկա են բոլոր կառույցները և օրենսդրական հիմքերը, որպեսզի այն առավել համապատասխանի միջազգային, այսինքն՝ ընդունելի չափանիշներին: Այնուամենայնիվ, «Ֆրիդոմ Հաուս» միջազգային իրավապաշտպան կազմակերպության 2018թ. հրապարակված զեկույցի համաձայն՝ ժողովրդավարության մակարդակի առումով Հայաստանը բնորոշվում է որպես «մասնակիորեն ազատ» երկիր, Հայաստանի ժողովրդավարության վարկանիշը նվազել է՝ 5.39-ից իջնելով 5.43 (ըստ 1=ամենաժողովրդավար և 7=ծայրահեղ ոչ ժողովրդավար սանդղակի)[2]:

Ժողովրդավարացման գործընթացները բավականին դանդաղ են ընթանում: Ընդհանուր առմամբ, ժողովրդավարության երաշխավորումը դրա երկու կարևոր բաղադրիչների՝ **ուղղակի ժողովրդավարության** և **իրավունքի գերակայության** միջոցով, չի իրականացվում:

Միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա, որոնց Հայաստանն անդամակցում է, պետությունը պատասխանատվություն է ստանձնել համաձայն որի իր քաղաքացիների համար պետք է ապահովի արդյունավետ դատական պաշտպանությունը և դրա հասանելիությունը միջազգային չափանիշներին համապատասխան: Սակայն վերջին տարիներին այն չի գրանցել արդյունավետության շոշափելի բարձրացում

[1] Տես՝ http://www.advocates.am
[2] «Անցումային փուլում գտնվող երկրներ 2018» զեկույց, «Ֆրիդոմ հաուս», https://freedomhouse.org/report/nations-transit/2018/armenia

հասարակությանը, հատկապես խոցելի խմբերին, անհրաժեշտ և բավարար չափով իրավական-իրավաբանական օգնության տրամադրման գործում:

Այսպիսով, առկա են լուրջ մարտահրավերներ իրենց մի շարք խնդրահարույց ճյուղավորումներով, որոնք պահանջում են հիմնավոր լուծումներ:

Պետությունն իհարկե որոշակի քայլեր ձեռնարկել է իրավիճակը շտկելու համար, որոնցից մեկը **հանրային պաշտպանի կառույցի** ստեղծումն էր ՀՀ Փաստաբանների պալատի կազմում:

«Հանրային պաշտպանի գրասենյակը կարևոր դեր ունի քրեական դատավարությունում արդարադատության ապահովման գործում: Հակակոռուպցիոն արդարադատության համակարգը, հիմք ընդունելով դատավարության մեջ երկու կողմերի միջև հավասարությունը, պահանջում է ճանաչել իրավական ներկայացուցչության իրավունքը և, մասնավորապես, համարժեք ներկայացուցչությունը, որպեսզի երաշխավորի արդարադատություն»[3]:

Սակայն, որքան էլ դրական, այս և մի շարք հարակից և առնչվող այլ քայլեր, բավարար չեն վերը նշված պարտավորությունները պատշաճ կերպով իրականացրած համարելու համար:

Ընդհանուր տեղեկություններ Հանրային պաշտպանի գրասենյակի մասին

Հանրային պաշտպանի գրասենյակը (ՀՊԳ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում սոցիալապես անապահով խավերին օրենքով նախատեսված կարգով ու դեպքերում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար:[4] Այն ունի իր գրասենյակները Երևանում և ՀՀ-ի բոլոր մարզերում:[5] ՀՊԳ-ում աշխատող հանրային պաշտպանը փաստաբան է, ով գործում է գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հետ կնքած աշխատանքային պայմանագրի հիման վրա: Հանրային պաշտպանը վարձատրվում է պետական բյուջեից՝ օրենքով սահմանված չափով և կարգով: Քրեական գործերով անվճար իրավաբանական օգնությունն իրականացվում է վարույթն իրականացվող մարմնի որոշման հիման վրա՝ ՀՊԳ-ի ղեկավարի կողմից հանրային պաշտպանի նշանակման միջոցով: Քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով անվճար

[3] Հանրային պաշտպանություն, http://www.justice.gov.il/En/Units/PublicDefense/About/Pages/default.aspx

[4] Անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկը տես՝ http://advocates.am/images/hpg_mrcuyt/41.pdf

[5] http://advocates.am/images/hpg/Regional_offices_PDO_30.03.2018.pdf

իրավաբանական օգնությունը տրամադրվում է քաղաքացիների դիմումների հիման վրա ՀՊԳ-ի ղեկավար կողմից՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:[6]

ՀՀ Արդարադատության նախարարության կողմից ընդունված ,Փաստաբանության մասին օրենքի[7] 41-րդ հոդվածի համաձայն՝ հասարակության մյուս խմբերի շարքում վերոհիշյալ կառույցի ծառայություններից կարող են օգտվել 14 խոցելի խմբեր, քանի որ այն անվճար է (հաշվի առնենք, որ Հայաստանի 2 մլն 972.9 հազար մարդ կազմող բնակչության մոտ 30 տոկոսը հատում է աղքատության շեմը): [8] Ըստ 2018թ. փետրվարի տվյալների, կառավարությունը նպատակ ուներ ընդլայնել խմբերի թիվը, սակայն եղան կարծիքներ, որ դա միայն բացասական ազդեցություն էր ունենալու քաղաքացիների սպասարկման որակի վրա: ՀՀ Արդարադատության նախարարությունն ընդունում էր, որ խնդիրն իրապես գոյություն ունի, և որ իրենք աշխատում են իրավիճակը շտկելու ուղղությամբ, օրինակ, որ Հանրային պաշտպանի գրասենյակը կարող է իրականացնել հանրային պաշտպանությունն այլ եղանակներով: «Եղանակներից առաջինը, երբ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանները, փաստաբանական դպրոցի ունկնդիրները, այլ իրավաբաններ ընդգրկված կլինեն հանրային պաշտպանի գրասենյակի կողմից հատուկ ցուցակում և երկրորդը՝ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանները դատական ներկայացուցչություն կապահովեն և դրանց դիմաց վճարումները կկատարեն ինչպես հանրային պաշտպանի գրասենյակի և բյուջեի խնայողությունների հաշվին, այնպես էլ ձևավորված գրասենյակի հատուկ ֆոնդի միջոցներից»,- ասել է ՀՀ Արդարադատության նախկին նախարար Արփինե Հովհաննիսյանը՝ ընդգծելով, որ այս կարգավորմամբ հնարավորություն կստեղծվի առավել մատչելի դարձնել քաղաքացիներին տրամադրվող անվճար իրավական օգնությունը:[9]

---

[6] http://www.advocates.am/about-us/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A3%D6%80%D5%A1%D5%BD%D5%A5%D5%B6%D5%B5%D5%A1%D5%AF.html

[7] http://www.advocates.am/%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%AF%D5%BF%D5%A5%D6%80/%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%AF%D5%BF%D5%A5%D6%80/%C2%AB%D6%83%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6%C2%BB-%D5%B0%D5%B0-%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84.html

[8] https://www.adb.org/countries/armenia/poverty

[9] http://www.aravot.am/2016/12/22/840033/

Ամփոփելով դատարանների դիտորդման, օրենսդրության ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև մի շարք փաստաբանների, հանրային պաշտպանների, հանրային պաշտպանի ծառայություններից օգտվող քաղաքացիների հարցումների միջոցով, ոլորտի մասնագիտացված կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը՝ եկել ենք այն եզրակացության, որ գրասենյակի աշխատանքը ոչ բավարար չափով է համապատասխանում միջազգային չափանիշներին և, հետևաբար, անհրաժեշտ կերպով չի նպաստում հանրային կարիքների արդյունավետ բավարարմանը:

«Հանրային պաշտպանության համակարգը չի աշխատում այնպես, ինչպես մենք բոլորս կուզենայինք, որ այն աշխատեր: Բայց փաստ է, որ հանրային պաշտպանների թվում նվիրված ու պրոֆեսիոնալ փաստաբաններ կան: Սակայն չի կարող մարդը տարվա մեջ 40-50 գործ վարել: Դա նորմալ չէ: Սա նշանակում է, որ հանրային պաշտպանն օրնիբուն պետք է աշխատի, անգամ առանց հանգստի իրավունքի»:

Նինա Կարապետյանց, «Հելսինկյան ասոցիացիայի» նախագահ

Դատարանների դիտորդման, օրենսդրության ուսումնասիրության, փաստաբանների, հանրային պաշտպանների, հանրային պաշտպանի ծառայություններից օգտվող քաղաքացիների հարցումների միջոցով ստացված տվյալների հիման վրա մենք առանձնացրել ենք ստեղծված իրավիճակին հատուկ խնդիրներ: Դրանք ներկայացվել են 2018թ. ապրիլի 13-ին հրավիրված կլոր-սեղան ձևաչափով հանդիպում-քննարկման ժամանակ, որին ներկա էին ՀՀ ՀՊԳ ղեկավար Մելանյա Առուստամյանը, ՀՀ Փաստաբանների պալատի ղեկավարի օգնական Նելլի Հարությունյանը, իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներ, փաստաբաններ, լրագրողներ, անկախ դիտորդ: Հանդիպման նպատակը ոլորտի մասնագետների և մասնագիտացված կազմակերպությունների ընդհանուր քննարկման արդյունքում առավել արդյունավետ, կիրառելի և գործնական առաջարկների ստացումն էր:

Արձանագրված խնդիրները

Այսպիսով, առանձնացրել ենք հետևյալ խնդիրները.

Խնդիր թիվ 1. Հանրային պաշտպանների հաստիքների քանակը 54 է, որից 26-ը՝ մարզերում: Հանրային պաշտպանների թիվը 66 պաշտպան է, որից 43-ը մարզերում են:[10] Մինչդեռ, ինչպես նշել է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մ.

[10] http://advocates.am/images/hpg_hashvetvutyunner/2016/Hashvetvutyun_qreakan_2016.pdf, http://advocates.am/images/banner/Havelvac-455-HPG_marzer_texabashxum_2017.pdf

Առուստամյանը, դեռևս 2012 թվականից գործող հաստիքաքանակն իրոք բավարար չէր և որ այդ թվականին արդեն գրասենյակը պետք է ունենար 75 հանրային պաշտպանի հաստիքակազմ:[11]

Այսպիսով, Հանրային պաշտպանի երևանյան գրասենյակում և Հայաստանի այլ մարզերի մասնաճյուղերում աշխատող փաստաբանների ներկա թիվն ակնհայտորեն ցածր է քաղաքացիների ներկայացրած դիմումների թվի համեմատ:

Խնդիր թիվ 2. Հանրային պաշտպանները գերծանրաբեռնվում են, որն իրենց իսկ կողմից բնութագրվում է որպես *ծայրահեղ* և *աննախադեպ*: Գործերի հիմնական մասը քրեական բնույթ են կրում (իհարկե կան նաև քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով դիմումներ): Ըստ ՀՊԳ ղեկավարի, քաղաքացիներից ստացված գրեթե բոլոր դիմումներն ընդունվում են:

Եթե նախկինում հանրային պաշտպանի վարույթում եղել է 20, 30, առավելագույնը՝ մինչև 35 գործ, ապա ներկայումս այդ թիվը հասնում է տարեկան 49, 60, նույնիսկ մինչև 79-ի:

«Հանրային պաշտպանի գրասենյակն իրոք ծանրաբեռնված է աշխատում, բայց այնպես չէ, որ մեր պաշտպաններն ուզում են այդպես աշխատել: Մենք ունենք շատ արհեստավարժ կադրեր: Ուղղակի կա օրենսդրական խնդիր, որը մենք բարձրացնում ենք: Կա նաև հաստիքների պակաս»:

Մելանյա Առուստամյան, ՀՊԳ ղեկավար

«Ունենք փայլուն հանրային պաշտպաններ, ովքեր այս ծանրաբեռնվածության պայմաններում չեն կարողանում իրենց բոլոր ունակությունները լիովին դրսևորել»:

Լիպարիտ Սիմոնյան, փաստաբան

«Ֆորսմաժորային իրավիճակ է. 50 քրեական գործ ունենալը նոնսենս է: Երբ իմ գործերը 10-ի են հասնում, զգում եմ, որ չի կարելի շարունակել»:

Երվանդ Վարոսյան, փաստաբան

---

[11] Զ. Մեջլումյան, «Հանրային 54 պաշտպաններն աշխատում են ծանրաբեռնված. հաստիքները չեն ավելանում, գործերը՝ ընդհակառակը» հոդված, http://hetq.am/arm/news/87402/hanrayin-54-pashtpannery-ashkhatum-en-tsanrabernvats-hastiqnery-chen-avelanum-gortsery-yndhakaraky.html

«Այդքան գործ միաժամանակ վարելը ոչ նորմալ վիճակ է: Ես առաջարկում եմ, այսպես ասած, «օրենք խախտել» ՝չտրամադրել հանրային պաշտպան այն հիմնավորմամբ, որ մասնագետները ծանրաբեռնված են: Որպես փաստաբան երևի թե սխալ եմ անում, որ այսպիսի բան եմ ասում, բայց օրենքն այստեղ զրո է, եթե չի բխում իրավունքից»:

Արայիկ Պապիկյան, «Հելսինկյան ասոցիացիայի» խորհրդի նախագահ, փաստաբան

Խնդիր թիվ 3. Սա իր հերթին հանգեցնում է հնարավոր մյուս խնդրին, այն է՝ նշանակված բոլոր դատական նիստերին հանրային պաշտպանի մասնակցության գրեթե անհնարինության:

«Պետք է մասնակցենք օրական միջին հաշվով 3-ից 4 դատական նիստերի և 1-2 քննչական գործողությունների»:

Հանրային պաշտպան

Խնդիր թիվ 4. Պաշտպանյալների հետ տեսակցության սակավություն կամ գրեթե բացակայություն:

«10 րոպեով պաշտպանյալին հանդիպելու նպատակով հաճախ ստիպված ենք երկու և ավելի ժամ սպասել քրեակատարողական հիմնարկ ներս մտնելու համար, ներսում սպասելով ևս մեկ ժամ, որպեսզի կալանավորին համապատասխան ընթացակարգով բերեն: Ստիպված ենք այցելություններ կատարել շաբաթ և կիրակի կամ տոն օրերին»:

Հանրային պաշտպան

«Այո՛, գործերը գնալով աճում են, մեզ շատ են դիմում նաև դատապարտյալներ, օրինակ, քաղաքացիական հարցերով կամ պայմանական վաղաժամկետ ազատվելու համար: Իսկ դատապարտյալին, բնական է, հանրային պաշտպաններն այցելում են ՔԿՀ-ներում, ինչը ժամանակատար է: Նույն խորհրդատվությունն ազատության մեջ գտնվող քաղաքացու հետ տևում է, օրինակ, 10 րոպե, իսկ ՔԿՀ այցի պարագայում՝ մինչև 4 ժամ՝ ճանապարհը ներառյալ»:

Մելանյա Առուստամյան, ՀՊԳ ղեկավար

Խնդիր թիվ 5. Անտեղյակություն գործերի նյութերից կամ դրանց մակերեսային ծանոթություն: «Կարծես դառնում ենք *ձևական* պաշտպաններ»: Հանրային պաշտպան

Սա հանդիսանում է Փաստաբանության մասին օրենքի և Փաստաբանների վարքագծի կանոնակարգի էական խախտում:

Խնդիր թիվ 6. Վերոնշյալ հանգամանքները հաճախ ստիպում են քրեական գործերով անցնել արագացված դատաքննության իրականացման, ինչը ոչ միշտ է բխում պաշտպանյալի կամ վստահորդի շահերից:

Խնդիր թիվ 7. Հանրային պաշտպանի կողմից դատական նիստերը հաճախ հետաձգվում են կամ նիստը կայանալու դեպքում վերջինս չի կարողանում ներկայանալ: Դատաքննությունն ընթանում է արհեստական ձգձգումներով, որն իր հերթին հանգեցնում է դատաքննության ողջամիտ ժամկետների խախտման:

Խնդիր թիվ 8. Հանրային պաշտպանի գրասենյակի համար քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից հանրային պաշտպան նշանակելու որոշումը պարտադիր է:

Խնդիր թիվ 9. Ամբաստանյալի, նաև իր՝ հանրային պաշտպանի կամքին հակառակ հանրային պաշտպանի ներգրավումը դատական գործում:

Նշենք, որ այս զեկույցը նպատակ չունի անդրադառնալ վերոնշյալ խնդիրներին հարակից, ավելի նեղ կամ մասնավոր, դիպվածային բնույթ կրող խնդիրների:

Հիմնախնդիրները

Այսպիսով, ամփոփելով Հանրային պաշտպանի համակարգում վերոնշյալ և այլ հարակից, ներկայումս առկա խնդիրները՝ դրանք ներառել ենք առավել լայն **հիմնախնդիրների** մեջ: Դրանք հետևյալն են.

- արդյունավետ դատաքննության իրավունքի խախտում,
- ողջամիտ ժամկետում դատաքննության իրականացման իրավունքի խախտում,
- արդար դատաքննության իրավունքի խախտում:

Հանրային պաշտպանները կատարում են **սահմանադրական պահանջ**: Ներկայացնելով այն անձանց օրինական շահերն ու իրավունքները, ովքեր չեն կարող գործի վարույթում փաստաբան վարձել, հանրային պաշտպանները կարող են օժանդակել, որպեսզի մինչդատական, դատական կամ արտադատական գործընթացներն ավելի արդյունավետ իրացվեն: Այնուամենայնիվ, ֆինանսական միջոցների սակավությունը, մարդկային ռեսուրսների անբավարարությունը, աճող ծանրաբեռնվածությունը և մյուս բացասական հանգամանքները հանրային պաշտպանի համակարգի արդյունավետ իրականացման վերաբերյալ մտահոգությունների տեղիք են տալիս:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունն իրականացվել է 2017թ. մայիսից մինչև 2018թ. ապրիլ ամիսը: Հավաստի և համեմատական տվյալների հավաքման նպատակով կիրառած հիմնական մեթոդներն են.

- հանրային պաշտպանների մասնակցությամբ դատավարությունների դիտորդում,
- ՀՀ-ի, ԱՄՆ-ի և եվրոպական վեց երկրների՝ Շվեդիա, Գերմանիա, Ավստրիա, Բելգիա, Ֆրանսիա, Իտալիա հանրային պաշտպանության համակարգերի վերաբերյալ տեղեկույթի ուսումնասիրություն,[12]
- տեղեկույթի ձեռքբերում վերոնշյալ երկրների հանրային պաշտպաններին ուղղված նամակ-հարցումների միջոցով,
- անհատական հարցազրույցներ հանրային պաշտպանների, փաստաբանների, լրագրողների, Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայություններից օգտվողների հետ,
- ոլորտի վերաբերյալ այլ կազմակերպությունների ուսումնասիրություններ, հոդվածներ, այլն:[13]

---

[12] «Նոր առաջարկներ հանրային պաշտպանի գրասենյակը բարեփոխելու նպատակով», Ռոզա Վարդանյան, հոդված, «Հանուն իրավունքների» ՀԿ, 14.04.2018

[13] Օրինակ՝ «Իրավապահ և դատական մարմինները պետք է հասկանան, որ հանրային պաշտպանի գրասենյակը չի ստեղծվել նրանց ապահովագրելու համար», Բելլա Հովհաննիսյան, հարցազրույց, 10 օգոստոսի, 2009թ. , http://hetq.am/arm/news/38461/iravapah-ev-datakan-marminnery-petq-e-haskanan-or-hanrayin-pashtpani-grasenyaky-chi-stextsvel-nranc-apahovagrelu-hamar.html/,

«Պաշտպանության իրավունքի իրացման որակն ու արդյունավետությունը հանրային պաշտպանության համատեքստում». ուսումնասիրություն, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» (ԻՊԱՍ) ՀԿ, տեսանկյուն, 04.07.2014, http://hra.am/hy/point-of-view/2014/07/04/defender,

«Ծանրաբեռնվածության պատճառով հանրային պաշտպանի գրասենյակը որևէ դիմում չի մերժում». Արթուր Հովհաննիսյան, Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ, 2015-11-8, http://iravaban.net/en/106286.html,

«Հանրային պաշտպանի գրասենյակի պարզաբանումը Վարդգես Գասպարիի գործով», Մելանյա Առուստամյան, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար, հունվարի 20, 2016թ. , http://www.aravot.am/2016/01/20/649398/,

«ՄԱԿ ՓԳՀ-ի ու ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակի համատեղ նախաձեռնությունը», 24.11.2016, http://www.un.am/hy/news/525

- կլոր-սեղան ձևաչափով աշխատանքային հանդիպում-քննարկում,[14]
- հանդիպմանը ներկայացված առաջարկների հնարավոր փոփոխությունների և լրամշակման նպատակով թեմային առնչվող հետագա հրապարակումների և ոլորտի զարգացումների ուսումնասիրություն:[15]

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԸ

Հետազոտությամբ ուսումնասիրվել է նաև հանրային պաշտպանության միջազգային լավագույն՝ մասնավորապես ԱՄՆ-ի, Շվեդիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Բելգիայի, Ֆրանսիայի և Իտալիայի փորձը, ներառելով հետևյալ տարրերը՝

- երկրի բնակչության թիվը,
- փաստաբանների քանակը,
- վճարման կարգը և վարձատրության չափը,
- հանրային պաշտպանության համակարգը, ներառյալ՝

✓ հանրային պաշտպանություն իրականացնող կառույցը,
✓ հանրային պաշտպան ստանալու կարգը,
✓ հանրային պաշտպան նշանակելու կարգը,
✓ հանրային պաշտպանի ծառայությունների վճարման կարգը:[16]

«Հանրային պաշտպանի գրասենյակ» էլեկտրոնային ծրագիրն անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում ՀՀ տարածքումե, հոդված, 28 հուլիս, 2017, https://armenpress.am/arm/news/900135/hanrayin-pashtpani-grasenyak-elektronayin-tsragirn-anvtchar.html,

«Սասնա ծռերի» դատավարությանը նոր հանրային պաշտպանի ներգրավման հարցը՝ բանավեճի թեմա». հոդված, Տաթև Դանիելյան, օգոստոս 30, 2017, https://www.azatutyun.am/a/28705202.html

[14] Կլոր-սեղան քննարկման ներկայացման նյութը տես՝ https://hahr.am/ARM/

[15] Օրինակ՝ «Հանրային պաշտպանի գրասենյակը որևէ մեկի դիմում չի մերժում. Մելանյա Առուստամյան», հոդված, 30/01/2018, https://www.panorama.am, «Հանրային պաշտպանի գրասենյակը՝ մակաբույծ կառույց», Ա. Սահակյան, 23 փետրվար 2018, http://avangard.am/am/post/9/1737/#.WwUZLUiFPcs

[16] Ստորև ներկայացված են ուսումնասիրված տեղեկույթից այն մասերը միայն, որոնք ըստ մեր կարծիքի, կարևոր են և օգտակար գտնվեցին Հայաստանի Հանրապետությունում հանրային պաշտպանի համակարգը գնահատելու և դրա բարեփոխմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու համար:

Բնակչության թիվը

- ԱՄՆ-ում՝ 327,423,911 մարդ, որից
- Կալիֆոռնիայի նահանգում՝ 39,776,830 մարդ,
- Լոս Անջելեսի վարչական շրջանում՝ 10,137,915 մարդ:

Փաստաբանների քանակը

- ԱՄՆ-ում՝ 1,335,963 գործող փաստաբան, որից
- Կալիֆոռնիայի նահանգում՝ 168,746 փաստաբան,
- Լոս Անջելեսի վարչական շրջանում՝ 708 փաստաբան:

Աշխատավարձի չափը

- Կալիֆոռնիայի նահանգում՝ տարեկան 81,435 ԱՄՆ դոլար,
- Լոս Անջելեսում՝ տարեկան 93,417 ԱՄՆ դոլար, որը 15%-ով բարձր է միջին աշխատավարձից:

Հանրային պաշտպան տրամադրելու անհրաժեշտ պայմանները

- Լոս Անջելեսի վարչական շրջանի Հանրային պաշտպանի գրասենյակը պաշտպան է տրամադրում միայն անվճարունակ անձանց:
- Որոշ դատարաններում այս ընթացակարգն իրականացվում է դատավորի կողմից, ով ուսումնասիրում է մեղադրյալի ֆինանսական միջոցները և որոշում կայացնում նրան հանրային պաշտպան տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ: Այլ դատարաններում այդ որոշումը կայացնում է հանրային պաշտպանը:
- Դատավարության առաջին փուլում մեղադրյալից պահանջվում է լրացնել ֆինանսական տեղեկագիր, որպեսզի որոշել, արդյո՞ք նա ունի մասնավոր փաստաբան վարձելու ֆինանսական հնարավորություն:
- Եթե դատարանի կողմից նշանակված հանրային պաշտպանն է լինելու մեղադրյալի ներկայացուցիչը դատարանում, նահանգի օրենքը պահանջում է, որ մեղադրյալը վճարի 50 ԱՄՆ դոլար գրանցման վճար:
- Այն մարդիկ, ովքեր համապատասխանում են հանրային պաշտպան ստանալու պայմաններին, սակայն վճարունակ չեն և չեն կարող վճարել նույնիսկ գրանցման վճարը, չեն զրկվում հանրային պաշտպանի ծառայությունից օգտվելու հնարավորությունից:

Հանրային պաշտպան նշանակելու կարգը

• Միացյալ Նահանգներում հանրային պաշտպանը նշանակվում է դատարանի կողմից:

• Լոս Անջելեսի վարչական շրջանում քրեական գործով անվճարունակ ամբաստանյալին պաշտպան տրամադրելու երեք տարբերակ կա.

1. Հանրային պաշտպանի տեղակալներ, ովքեր նշանակվում են Լոս Անջելեսի վարչական շրջանի հանրային պաշտպանի կողմից:

2. Եթե ինչ-որ պատճառով հանրային պաշտպանը չի կարող հանդես գալ որպես փաստաբան (օրինակ, եթե կա շահերի բախում), ապա որպես փաստաբան հանդես է գալիս հանրային պաշտպանի այլընտրանքային տեղակալը, ով նշանակվում է Լոս Անջելեսի վարչական շրջանի այլընտրանքային հանրային պաշտպանի կողմից: Այն առանձին կառույց է, որը ստեղծվել է Լոս Անջելեսի վարչական շրջանի կողմից:

3. Եթե վարչական շրջանի ոչ մի գրասենյակի փաստաբան չի կարող մեղադրյալին ներկայացնել դատարանում, ապա վերջինս նշանակում է մասնավոր փաստաբան: Վերջինս պետական աշխատող չէ, թեև վճարվում է Լոս Անջելեսի վարչական շրջանի կողմից այն աշխատանքի դիմաց, որ անում է անվճարունակ վստահորդի պաշտպանությունն իրականացնելու համար:

Հանրային պաշտպանի ծառայությունների վճարման կարգը

➢ Եթե պարզվում է, որ մեղադրյալը վճարունակ է, ապա վերջինս վճարում հանրային պաշտպանի ծախսերի դիմաց:

➢ Իսկ եթե նա վճարունակ չէ, ապա ծառայությունը մատուցվում է անվճար:

Հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածությունը կանխելու ընթացակարգը[17]

• Հաշվի է առնվում փաստաբանի **գործիմացությունը՝** իրավաբանական գիտելիքները, հմտությունները, գործի մանրամասների խորն իմացությունը և համապատասխան պատրաստվածությունը:

• Փաստաբանի **ջանասիրությունը** և **արագ արձագանքելու կարողությունը՝** գործը խելամիտ ժամկետներում ներկայացնելու համար:

• **Նշանակումն ընդունելը**, այսինքն՝ փաստաբանը չպետք է խուսափի դատարանի կողմից նշանակված անձի պաշտպանությունից, եթե դրա համար չկան հիմնավոր և լուրջ պատճառներ: Օրինակ, հաճախորդին ներկայացնելը հավանական է, որ հանգեցնի մասնագիտական վարքագծի կանոնակարգի կամ այլ օրենքի խախտումների,

[17] Տես՝ ԱՄՆ իրավաբանների ընկերակցության «Էթիկայի կանոնները», https://www.americanbar.org/groups/professional_responsibility/resources/lawyer_ethics_regulation.html

հաճախորդին ներկայացնելը կարող է հանգեցնել փաստաբանի համար անհիմն ֆինանսական ծախսերի, կամ հաճախորդը կամ իրավիճակը հոգեբանական կամ այլ հիմնավոր պատճառներով հնարավոր է անընդունելի կամ տհաճ են փաստաբանին, որը բացասական ազդեցություն կարող է ունենալ հաճախորդ-փաստաբան հարաբերությունների կամ փաստաբանի՝ հաճախորդին ներկայացնելու կարողության վրա:

Շվեդիա

Բնակչության թիվը

- 10,128,320 մարդ

Փաստաբանների թիվը

- 5,618 գործող փաստաբան

Փաստաբանի աշխատավարձի չափը

- տարեկան մոտավորապես 58,168 ԱՄՆ դոլար

Վճարման կարգը[18]

- Հանրային պաշտպանը փոխհատուցում է ստանում պետական միջոցներից:
- Փոխհատուցման չափը պայմանավորված է հաճախորդի պաշտպանության ժամկետի տևողությամբ: ժամավճարը հաստատվում է կառավարության կողմից:
- Հանրային պաշտպանի հմտությունների մակարդակով կամ այլ կարևոր գործոններով պայմանավորված՝ ժամավճարը կարող է շեղվել միջին աշխատավարձի չափից:
- Հանրային պաշտպանը չի կարող վստահորդից լրացուցիչ փոխհատուցում պահանջել: Եթե վստահորդը հանրային պաշտպանին լրացուցիչ փոխհատուցում է տրամադրում, ապա այդ գումարը վերադարձվում է վստահորդին:

Հանրային պաշտպան տրամադրելու անհրաժեշտ պայմանները

- Ձերբակալված անձի կամ կալանավորի պահանջով վերջինիս տրամադրվում է հանրային պաշտպան: Հանրային պաշտպան է տրամադրվում նաև հանցագործության մեջ կասկածվող անձին՝ վերջինիս դիմումի հիման վրա, ում նկատմամբ հնարավոր է կայացվի վեց ամիս կամ ավել տևողությամբ ազատազրկման որոշում:

[18] Վերցված է Շվեդիայի «Դատական ընթացակարգի օրենսգիրքից», բաժին 21. «Մեղադրյալը և նրա պաշտպանը», https://www.government.se/contentassets/a1be9e99a5c64d1bb93a96ce5d517e9c/the-swedish-code-of-judicial-procedure-ds-1998_65.pdf

Հանրային պաշտպան նշանակելու կարգը

- Հանրային պաշտպան նշանակվում է դատարանի կողմից:

❖ Եթե առաջին ատյանում դատարանը կայացրել է վստահորդի համար ոչ նպաստավոր որոշում, դատավորը կարող է նոր պաշտպան նշանակել մինչև վստահորդի բողոքը կամ բողոք ներկայացնելու ժամկետի ավարտը, որով նոր պաշտպանին գործի ուսումնասիրության հնարավորություն է տրվում:

Գերմանիա

Բնակչության թիվը

➢ 82500 000 մարդ

Փաստաբանների թիվը

➢ 165 857 փաստաբան

Ծառայությունների դիմաց վճարման չափը

➢ Ամբաստանյալի կողմից ընտրված փաստաբանի դեպքում՝ տարեկան 85 000 եվրո

➢ Դատարանի կողմից նշանակված փաստաբանի (պարտադիր պաշտպան) դեպքում ընտրված պաշտպանի միջին աշխատավարձի 80%-ը կամ մոտ 68000 եվրո

Տիպային վճարումները քրեական գործընթացում

Վճարների ցանկը (ըստ ,Փաստաբանների վարձատրության մասինե օրենքի)	Վճարման ենթակա գումարի սահմանաչափը՝ եվրոյով	Միջին արժեքը՝ եվրոյով
Հիմնական վճար	40,00- 360,00	20,00
Դատավարության վճար (իշխանության մարմին)	40,00 - 290,00	165,00
Ծախսեր		20,00
Դատավարության վճար (դատարան)	40,00 - 290,00	165,00
Դատական ակտերի ուսումնասիրություն		12,00
Փաստաթղթերի ուսումնասիրություն		20,00
ԸՆԴԱՄԵՆԸ	**1043,00**	**877,00**

Կառույցը

- Գերմանիայի պալատ և 27 տարածաշրջանային պալատներ[19]

Հանրային պաշտպան նշանակելու կարգը

- Հանրային պաշտպան նշանակվում է միայն անհրաժեշտության դեպքում. ,պարտադիրե պաշտպանություն:
- Պարտադիր պաշտպանը նշանակվում է դատարանի կողմից:
- Անհրաժեշտ (պարտադիր) պաշտպանություն նշանակում է դատավարական ընթացակարգային իրավիճակ, որտեղ օրենսդիրը կարծում է, որ մեղադրյալը չի կարող իրեն պաշտպանել և չունի մասնավոր պաշտպան:
- Պարտադիր պաշտպանի դեպքում հաշվի չի առնվում մեղադրյալի վճարունակ կամ անվճարունակ լինելը:
- Նշանակման դեպքում հանրային պաշտպանը պարտավոր է ստանձնել պարտադիր պաշտպանությունը համաձայն
  - քրեական դատավարության օրենսգրքի,
  - վարչական իրավախախտման մասին օրենքի,
  - քրեական գործերով միջազգային իրավական աջակցության մասին օրենքի,
  - միջազգային քրեական դատարանի մասին օրենքի:

Հանրային պաշտպան տրամադրելու անհրաժեշտ պայմանները

- Հաշվի է առնվում վստահորդի ցանկությունը:
- Պարտադիր պաշտպան նշանակելուց առաջ մեղադրյալին հնարավորություն է տրվում ընտրել պաշտպան սահմանված ժամկետներում:
- Դատարանի նախագահը հաստատում է ընտրված պաշտպանին, եթե բացարկելու լուրջ պատճառներ չկան:
- Ծառայությունների գնացուցակը ներկայացվում է պետական գանձարան՝ փոխհատուցման նպատակով:
- Այն դեպքերում, երբ նշանակված պաշտպանը կարող է ապացուցել, որ մեղադրյալը ֆինանսապես ի վիճակի է վճարել ընտրված պաշտպանի ծառայությունների դիմաց, դատարանը կարող է պարտավորեցնել պաշտպանյալին վճարել ծառայությունների դիմաց ,ընտրված պաշտպանիե սակագների համաձայն:
- Եթե մեղադրյալը մեղավոր չէ, դատական ծախսերի վճարումը փաստաբանին կատարվում է պետական գանձարանից:

[19] https://www.brak.de/

➢ Եթե մեղադրյալը ճանաչվում է մեղավոր, սակայն վճարունակ չէ, դատական ծախսերի վճարումը, ներառյալ պաշտպանի ծառայությունների դիմաց փոխհատուցումը, կատարվում է պետական գանձարանից՝ հետագայում հետգանձման պահանջով:

Ավստրիա

Բնակչության թիվը

➢ 8 739 806 մարդ

Փաստաբանների թիվը

➢ 6 200 գործող փաստաբան, որից 2 200-ը՝ ուսնակ իրավաբան

➢ Վիեննայի պալատում դիմումների թիվը 2017թ. կազմել է 20,864 գործ՝ մեկ փաստաբանին մոտ 3,5 դատական գործ

Փաստաբանի աշխատավարձի չափը

➢ տարեկան 56000 եվրո

Կառույցը

➢ Ավստրիական պալատ և 9 տարածաշրջանային պալատներ՝ որպես ինքնակառավարվող մարմիններ

➢ Փաստաբանական պալատները պետությունից տարեկան միանվագ գումար են ստանում: Այս գումարը փոխանցվում է փաստաբանների կենսաթոշակային ֆոնդ:

Փաստաբան նշանակելու կարգը

- ➢ Յուրաքանչյուր փաստաբան պարտավոր է մասնագիտական օգնություն ցուցաբերել:
- ➢ Փաստաբանական պալատն է ընտրում և նշանակում փաստաբանին:
- ➢ Փաստաբանը կարող է մերժել գործի ստանձնումը, եթե այն որակվում է անհիմն կամ կանխակալ:
- ➢ Դիմողը չի կարող ընտրել փաստաբանին, բայց կարող է դիմումի մեջ նշել նախընտրած փաստաբանի անունը: Այս դեպքում փաստաբանը կապ հաստատում դիմողի հետ, որպեսզի որոշի, արդյո՞ք ինքը պատրաստվում է գործն ստանձնել:
- ➢ Փաստաբանը պարտավոր չէ գործը ստանձնել և կարող է այն մերժել առանց պատճառների մասին բացատրության:
- ➢ Փաստաբանը պարտավոր է հրաժարվել գործն ստանձնելուց, եթե նա ներկայացել է որպես մեղադրող կողմ նույն կամ դրան առնչվող այլ՝ ավելի վաղ գործում:

- Փաստաբանը նշանակվում է՝ հաշվի առնելով դիմողի գտնվելու վայրը, դատարանը և գործի բնույթը:
- Փաստաբանի նշանակման ժամանակ կիրառվում է ռոտացիոն սկզբունքը, այբբենական կարգով՝ ըստ առանձնացված մասնագիտացման ցանկերի:
- Գործերի բաշխումը կատարվում է սահմանված ընթացակարգերով՝ ապահովելով փաստաբանների առավելագույն հավասարաչափ ներգրավումը և ծանրաբեռնվածությունը: Կանոնակարգերը կարող են սահմանել կանոններ, որոնց համաձայն փաստաբանները (հարգելի պատճառներով) ամբողջությամբ կամ մասնակի ազատվում են հանրային պաշտպանի գործառույթներից:

<u>Հանրային պաշտպան տրամադրելու անհրաժեշտ պայմանները</u>

- Հանրային պաշտպանը տուժողին տրամադրում է անվճար իրավաբանական ծառայություններ:
- Հանրային պաշտպան տրամադրվում է դատարանի որոշմամբ՝ փաստաբանական պալատի կողմից՝ հաճախորդի դիմումի հիման վրա:
- Հանրային պաշտպան տրամադրվում է՝ հաշվի առնելով դիմողի եկամուտի չափն ըստ սպառողական նվազագույնի զամբյուղի:

Այս կանոնները սահմանվում են պալատների կանոնակարգերով:

Բելգիա

<u>Բնակչության թիվը</u>

- 11.481.143 մարդ

<u>Փաստաբանների թիվը</u>

- 18400 գործող փաստաբան

<u>Փաստաբանի աշխատավարձի չափը</u>

- տարեկան 42800 եվրո
- Մեկ գործի համար հանրային պաշտպանը ստանում է 365-400 եվրո:

<u>Կառույցը</u>

- Բելգիան չունի առանձնացված հանրային պաշտպանի կառույց:
- Անձին իրավաբանական օգնություն տրամադրելու որոշումը կայացվում է տեղական իրավաբանական օգնության բյուրոյի կողմից, որը վերահսկվում է Բելգիայի 27 շրջանների տեղական փաստաբանական ասոցիացիաների կողմից:

- Յուրաքանչյուր բյուրո գործում է անկախ և ինքն է որոշում իր քաղաքականությունը:
- Իրավաբանական օգնության բյուրոն փաստաբան է նշանակում ցուցակի համաձայն: Ցուցակում ներգրավված են իրավաբան-ուսնակներ և որակավորված իրավաբաններ: Առաջինները պարտավոր են իրավաբանական օգնություն տրամադրել իրենց եռամյա դասընթացների ընթացքում, իսկ վերջիններս իրենք են որոշում իրենց անունները ցուցակում ներգրավելու մասին:

<u>Հանրային պաշտպան տրամադրելու անհրաժեշտ պայմանները</u>

- Իրավաբանական աջակցության պահանջներին բավարարելու համար միայնակ ապրող դիմողը պետք է ունենա ամսական 942 եվրոյից պակաս եկամուտ:
- Նա կարող է իրավունք ստանալ օգտվելու մասնակի իրավաբանական աջակցությունից, եթե իր եկամուտը կազմում է 1,210 եվրոյից պակաս գումար:
- Ամուսնացած կամ երեխա ունեցող մարդկանց համար վճարման շեմը ավելի բարձր է:
- Ամբողջական իրավաբանական աջակցության համար դիմողի ամսական եկամուտը պետք է լինի 1,210 եվրոյից պակաս, իսկ մասնակի իրավաբանական աջակցության համար՝ 1,477 եվրոյից պակաս:
- Որոշումն այն մասին, թե որքան պետք է դիմողը վճարի մասնակի իրավաբանական աջակցություն ստանալու համար, եթե իրավասու է ստանալ հանրային պաշտպան, ընդունվում է տեղական իրավաբանական ինքնակառավարման մարմինների կողմից և կարող է տարբեր շրջաններում տարբեր լինել:
- Որոշ խմբեր ազատվում են ֆինանսական պատասխանատվությունից: Այդ խմբերը ներառում են անչափահաս, նպաստառու, ապաստան հայցող և հոգեկան հիվանդությամբ տառապող մարդկանց:
- Մեղադրյալին կարող է փաստաբան տրամադրվել նախաքննական փուլից սկսած, սակայն փաստաբանը չի կարող ակտիվորեն մասնակցել հարցաքննությանը. նա պետք է միայն լուռ նստի և լսի:

Իտալիա

<u>Բնակչության թիվը</u>

- 59.309.039 մարդ

<u>Փաստաբանների թիվը</u>

- 231.000 գործող փաստաբան

Փաստաբանի աշխատավարձի չափը

- տարեկան 48000 եվրո

Կառույցը

- Իրավաբանական աջակցության կենտրոնացված կառույց չկա:
- Եթե կասկածյալը կամ ամբաստանյալը չունի փաստաբան, դատախազությունը, ոստիկանությունը կամ դատավորը պահանջում են, որ փաստաբանների ասոցիացիան փաստաբան տրամադրի:
- Պետական փաստաբանների ծառայություններն անվճար չեն:
- Ծախսերը վճարվում են պետության կողմից, եթե կասկածյալը կամ մեղադրյալը անվճարունակ է և համապատասխանում է հանրային պաշտպան ստանալու պայմաններին:
- Անձը չի կարող ինքն իրեն դատարանում ներկայացնել, և փաստաբան ունենալը պարտադիր պայման է:

Հանրային պաշտպան նշանակելու կարգը

- Իրավաբանների վճարները սահմանվում և հաստատվում են Արդարադատության նախարարության կողմից, որն ապահովում է ամեն մի մասնագիտական գործի համար նվազագույն և առավելագույն վճար:
- Իրավաբանական օգնության համար վճարը ցածր է. իրավաբանական օգնության փաստաբանը կարող է ակնկալել 1000-1500 եվրո գումար երեքից հինգ լսումով գործի համար, այնինչ մասնավոր փաստաբանը կարող է ստանալ 4000-5000 եվրո՝ նույն գործի համար:

Հանրային պաշտպան տրամադրելու անհրաժեշտ պայմանները

- Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունի այն անձը, ում եկամուտը մոտ տարեկան 10,776 եվրո է:
- Այն դեպքում, երբ եկամուտն այս ֆինանսական շեմից նույնիսկ շատ քիչ է բարձր, անձը զրկվում է որևէ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունից, սակայն նաև իրավունք չունի ինքն իրականացնել իր պաշտպանությունը:
- Եթե անձը չունի իր փաստաբանը, ապա նրա համար նշանակվում է պաշտպան: Անձն ընդունում է իր նշանակված պաշտպանին և պետք է վճարի նրա ծառայությունների դիմաց:
- Սա լարվածություն է ստեղծում թե՛ փաստաբանի և թե՛ վստահորդի համար, ով,

հնարավոր է, պետք է պարտք վերցնի և վճարի ծախսերի դիմաց այն փաստաբանին, ում ինքը չի ընտրել կամ չի ցանկացել, որ նշանակեն:

➢ Կամ, փաստաբանը հնարավոր է ժամանակատար քայլեր ձեռնարկի, օրինակ՝ դատի տալ հաճախորդին համապատասխան վճարումները չկատարելու համար:

Ֆրանսիա

Բնակչության թիվը

➢ 65.166.890 մարդ

Փաստաբանների թիվը

➢ 58224 իրավաբանական ասոցիացիայի անդամ

Փաստաբանի աշխատավարձի չափը

➢ տարեկան 67554 եվրո

Կառույցը

➢ Իրավաբանական աջակցության կենտրոնացված կառույց չկա:

➢ Աջակցություն տրամադրելու որոշումը կայացվում է դատարաններում գործող հանձնաժողովների կողմից:

➢ Հանձնաժողովների անդամներն են գլխավոր դատավորը, հանրության անդամը, տեղական փաստաբանների ասոցիացիայի անդամը և այլ ներկայացուցիչներ:

Հանրային պաշտպան նշանակելու կարգը

➢ Երբ անձը հաստատվում է իրավաբանական օգնություն ստանալու համար, տեղական իրավաբանների ասոցիացիայի նախագահը նշանակում է փաստաբան:

➢ Կարելի է նաև ընտրել նախընտրելի փաստաբանին: Եթե վերջինս հասանելի է, ապա փաստաբանների ասոցիացիան նրա հետ կապ է հաստատում:

➢ Փաստաբանների ասոցիացիաները հաշվի են առնում փաստաբանների նեղ մասնագիտական փորձը և ոլորտը:

Հանրային պաշտպան տրամադրելու անհրաժեշտ պայմանները

➢ Իրավաբանական օգնության դիմաց վճարումները հաշվարկվում են հաշվի առնելով, թե գործը քանի մասից է բաղկացած:

➢ Այս որոշումը կայացնում է փաստաբանների ասոցիացիան:

➢ Գործի յուրաքանչյուր միավոր արժե մոտ 300 եվրո:

➢ Դատավորը հնարավորություն ունի պարտված կողմից պահանջել, որպեսզի

վերջինս վճարի հաղթող կողմի, ներառյալ իրավաբանական խորհրդատվության համար վճարված ծախսերը:

- Հարցում է անցկացվում և իրավաբանական օգնություն է տրամադրվում հաստատված չափորոշիչների համաձայն: Այս չափորոշիչները վերանայվում են ամեն տարի:
- 2014 թվականի դրությամբ, 100% իրավաբանական օգնություն ստանալու համար առավելագույն եկամուտը պետք է կազմի ամսական 936 եվրո:
- 1299-1404 եվրո ամսական եկամտի դեպքում մեղադրյալը, կասկածյալը կամ վստահորդը ստանում է իրավաբանական օգնություն 15 տոկոսի չափով:
- Մեղադրյալին կարող է փաստաբան տրամադրվել նախաքննական փուլից սկսած:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքում հանգած եզրակացությունների հիման վրա ձևավորվել է առաջարկությունների երկու խումբ: Առաջարկությունների նախագիծը ներկայացվել է 2018թ. ապրիլի 13-ին կայացած կլոր-սեղան հանդիպման ժամանակ և տեղադրվել կազմակերպության կայքէջում՝ հրապարակման նպատակով:

Առաջարկությունների առաջին խումբ

Այս խմբի առաջարկությունները քննարկվում են Հանրային պաշտպանի գրասենյակի ենթադրյալ բացակայության պայմանի դեպքում:

Այդ դեպքում՝

- ✓ Գործերը բաշխվում են բոլոր գործող փաստաբանների միջև Փաստաբանների պալատի կողմից:
- ✓ Յուրաքանչյուրին տրվում է տարեկան առավելագույնը 4 գործ:
- ✓ Գործերը բաշխվում են Փաստաբանների պալատի կողմից կազմված երեք առանձին ցանկերի համաձայն՝
  - ըստ մարզերի,
  - ըստ մասնագիտացման ուղղությունների,
  - այբբենական կարգով:
- ✓ Քաղաքացին կամ վարույթն իրականացնող մարմինը դիմում է Փաստաբանների պալատ՝ փաստաբան տրամադրելու խնդրանքով:
- ✓ Փաստաբանների պալատը հանձնարարում է գործն ըստ ցանկերի:
- ✓ Հիմնավոր պատճառի առկայության դեպքում փաստաբանը կարող է հրաժարվել գործից: Այս դեպքում Պալատը նշանակում է հաջորդ փաստաբանին՝ ըստ ցանկերի հաջորդականության:

✓ Ցանկերը և հանձնարարված գործերի քանակի մասին տեղեկությը ներկայացվում են ՓՊ-ի պաշտոնական կայքէջում, մշտապես թարմացվում են և հասանելի են բոլոր փաստաբաններին:

✓ Փաստաբանների վճարման չափը կազմում է ոչ պակաս, քան տվյալ մարզի կամ վարչական շրջանի դատախազին տրվող վճարման չափը:

Առաջարկությունների երկրորդ խումբ

Այս խմբի առաջարկությունները քննարկվում են Հանրային պաշտպանի գրասենյակի առկայության պայմանի դեպքում:

Այդ դեպքում՝

✓ Քաղաքացին կամ վարույթն իրականացնող մարմինը դիմում է Փաստաբանների պալատ՝ փաստաբան տրամադրելու խնդրանքով:

✓ Գործերը բաշխվում են Փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից:

✓ Նախ գործերը բաշխվում են բոլոր գործող հանրային պաշտպանների միջև՝ առավելագույնը 8 ընթացիկ գործ, ապա մնացած գործերը՝ առաջարկությունների առաջին խմբում նշված 3 ցանկերին համապատասխան:

✓ Հանրային պաշտպանների վճարումն իրականացվում է սահմանված դրույքաչափերի համաձայն: Մնացած դեպքերում գործում է ժամավճար, որի հաշվարկն իրականացվում է՝ հիմք ունենալով հանրային պաշտպանի դրույքաչափերը:

Այս առաջարկները նպատակաղղված են նպաստել Հայաստանի Հանրապետությունում հանրային պաշտպանության համակարգի զարգացմանը՝ ապահովելով բոլոր հաճախորդների համար մասնագիտացված և բարձրորակ իրավական ներկայացուցչություն, բոլոր վստահորդների, կասկածյալների, մեղադրյալների և դատապարտյալների օրինական շահերի ու իրավունքների պաշտպանությունը: